# ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ օգոստոսի 31-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը Մեղրի համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 8 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեք, ոռոգման ջրի հարցով երկու, աշխատանքի տեղավորման, մաքսակետում առևտրի կետի փակման, ավտոգազի գնի հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից մեկին տրվել է դրական լուծում, երկուսը՝ մերժվել է:

Աշխատանքի տեղավորման դիմումը վերցվել է հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են ոռոգման ջրի, մաքսակետում առևտրի կետի փակման, ավտոգազի գնի վերաբերյալ դիմումները: